**Արձանագրության 4**

**« ԵՔ-ԲՄԱԾՁԲ-18/83» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

25.06.2018թ.
ժամը՝ 11:45

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Գ. Գրիգորյան /ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Համբարձումյան /գնահատող/, Լ. Սաղոյան /գնահատող/, Մ. Վաթինյան /բացող/, Ռ. Ղասաբօղյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Կիրակոսյան |

**1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին**

(Գ. Գրիգորյան)

1 Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

**2«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/115» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին**

(Գ. Գրիգորյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունած որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ « **ԵՔ-ԲՄԱԾՁԲ-18/83**» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի

1-ին, 3-րդ, 5-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ ՍՊԸ -ն:

-2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել Օհանյան Ինդասթրիզ ՍՊԸ –ն:

-4- րդ, 7-րդ և 8-րդ չափաբ. մասով ընտրված մասնակից է ճանաչվել Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ –ն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**3 Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

(Գ. Գրիգորյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը **Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման** պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակիցներին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասը օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------- Գ. Գրիգորյան

Անդամներ՝ ---------------------------------- Ա. Համբարձումյան

---------------------------------- Լ. Սաղոյան

---------------------------------- Մ. Վաթինյան

---------------------------------- Ռ. Ղասաբօղյան

Քարտուղար՝ ---------------------------------- Ն. Կիրակոսյան